

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՈՎՏԱՍԵՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2014 Թ ԸՆԹԱՑՔՈՒՄ

### ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հովտամեջ համայնքի հարգելի բնակիչներ, հյուրեր պարոն Ա. Այվազյան այսօր Ձեր բննարկմանն ենք ներկայացնում Հովտամեջի գյուղական համայնքի ղեկավարի, ավագանու գյուղապետարանի աշխատակազմի 2014 թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կատարած աշխատանքները:

Գյուղապետարանը իր գործունեությունն իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի պահանջների համաձայն:

Գյուղն ունի 250 տնտեսություն, 1458 բնակչություն, 906 ընտրող, 267 հա ընդհանուր հողատարածություն, 215 գյուղատնտեսական նշանակության ոռոգելի հողեր՝ որից՝ 153 հա վարելահող, 55 հա տնամերձ հողամաս 7 հա համայնքային սեփականության հողեր; 2014 թ. զարմանը մշակվել է 196 հա, անցյալ տարվա համեմատ ավել է մշակվել 32 հա, չի մշակվել 19 հա; չմշակելու հիմնական պատճառներն են՝ սեփականատերերը բացակայում են, սեփականատերերը միջոցներ չունեն, ունեն սերմացույի և իրացման խնդիր: Աշնանը կատարվել է 35 հա կրկնակի ցանք:

Գյուղում հիմնականում մշակում են կարտոֆիլ, ցորեն և կաղամբ:

### Ըստ բնագավառների կատարվել են՝

#### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Սահմանված կարգով կազմակերպվել է գույքահարկի և հողի հարկի գանձումները; Գույքահարկի գանձումը տարեկան պլանով նախատեսվել է 1743.8 հ.դ, փաստացի կատարվել է 2159.0 հ.դ, այսինքն 123.8%: Հողի հարկը տարեկան նախատեսված է 4226.8 հ.դ, փաստացի կատարվել է 4256.7 հ.դ., այսինքն 100.7 %:

Պլանով նախատեսված այլ եկամուտներ 100.0 հ.դ., փաստացի կատարվել է 100.0 հ.դ., այսինքն 100,0 %: Վարձակալական հողեր՝ 100.0 հ.դ., կատարվել է 100%:

Պետության կողմից ստացված դոտացիան կատարվել է 100%: Տեղական տուրքերը նախատեսված 85 հ.դ., կատարվել է 50.0 հ.դ.: Տարեկան կատարողականը՝ 100.6%:

#### ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՊԻԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հովտամեջի միջնակարգ դպրոցի նախակրթարանի 1 ուսուցիչի աշխատավարձ է վճարվել 607,6 հ.դ.:

Շրջանավարտների համար կազմակերպվել է միջոցառում դպրոցը ավարտելու կապակությամբ ծախսվել է 100,0 հազ դրամ:

Համայնքում բնակվող առաջին անգամ դպրոց հաճախող 17 երեխաների նվերներ գնելու համար հատկացվել է 200,0 հազ.դրամ:

Ամանորին կազմակերպվել է միջոցառում և համայնքում բնակվող 147 երեխաների նվերների համար տրամադրվել է 628,0 հազ.դրամ:

Արմավիրում կայացած բերքի տոնի կապակցությամբ ծախսվել է 200,0 հազ.դրամ:

Համայնքը ունի գրադարան 5476 կտոր գրականությունով, որը շատ լավ պահպանված է:

Գրադարանից օգտվում են 28 ընթերցող, որոնք հիմնականում դպրոցականներ և ուսանողներ են:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Ժամանակին էջմիածնի զինկոմիսարիատ ենթ ներկայացրել համայնքի կցագրման ենթակա պատանհներ: Մայիսի 9-ի կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում, ծախսվել է 100, 0 հազ. դրամ իսկ Արցախյան պատերազմի 23 մասնակիցների տրվել է օգնություն 460.0 հ.դ յուրաքանչյուրին 20.0 հ.դ.:

Զոհված ազատամարտիկների 3 ընտանիքների տրվել է օգնություն 90.0 հ.դ. յուրաքանչյուրին 30.0 հ.դ., ծաղկեպսակներ է դրվել Հայրենական պատերազմի և Արցախյան շարժման զոհված ազատամարտիկների հուշարձանին:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Մարտի 8-ի կապակցությամբ համայնքում բնակվող 65 տարեկանը լրացած 66 կանանց տրվել է նվերներ, որի համար ծախսվել է 326,7 հազ. դրամ:

Համայնքում բնակվող 123 թոշակառուների տրվել է սոց.օգնություն 1230,0 հ.դ:

Սոցիալապես անապահով 9 ընտանիքի որպես օգնություն տրվել է 660,0 հ.դ.

Համայնքում նոր ծնված 8 երեխաների ընտանիքների տրվել է դրամական օգնություն 240,0 հ.դ.՝ յուրաքանչյուրին 30.0 հ.դ.: Համայնքում նոր կազմավորված 3 ընտանիք ստացել են 90.0հ.դ. օգնություն, յուրաքանչյուրը 30.0 հ.դ.դրամ: 25.0 հ.դ. փոխանցվել է <<Հայաստան>> համայնական հիմնադրամին:

Համայնքում հարազատը կորցրած 15 ընտանիքների հարազատների տրվել է դրամական օգնություն յուրաքանչյուրին 30.0 հ.դ. և ծաղկեպսակներ է դրվել մահացածների շիրիմներին:

Համայնքում բնակվող երկու զինակոչիկների, որոնք սովորում են Էջմիածնի ավտոդպրոցում, տրամադրվել է 30,0հ.դ. օգնություն ճանապարհաձախսի համար:

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Հունվարի առաջին տասնօրյակում կազմակերպվել է անասնազխաքանակի համատարած հաշվառման աշխատանքներ և արդյունքները ներկայացվել է վիճակագրական ծառայություն: Հաշվառվել և վիճակագրական վարչություն է ներկայացվել ցանքերի հուլիսյան հաշվետվության 4 ԳՏ ձևը: Վերանորոգվել և մաքրվել է ոռոգման ներտնտեսային ցանցի ջրամատակարարումը, որը ապահովում է տնամերձ հողամասերը:

**ԿՈՍՏԻՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Գարնանը մաքրվել է գյուղամիջյան ճանապարհի երկու կողմի առուները: Կատարվել է աղբահանություն շաբաթը մեկ անգամ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

1. Խմելու ջրագծերի վերանորոգում
2. Էլեկտրոլարերի մաշվածություն



*[Handwritten signature]*

**Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**